

ՀԱԼԵՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ (Ակնարկ)

Աւօ Գաթրճեան
avokat1970@hotmail.com

Սուրիոյ հայկական համայնքը կայացած, ամանդական համայնք է, իր ենթակառոյցներով, տարաբնոյթ հաստատութիւններով: Սուրիահայերը բոլոր ժամանակներուն ալ երկրին մէջ լաւ վարկ, ճանաչում եւ հեղինակութիւն ունեցած են, այդ պատճառով ալ երկրի իշխանութիւններէն մինչեւ խոնարհագոյն խաւը միանշանակ դրականօրէն կ'արտայայտուի անոնց մասին՝ իբրեւ նուիրեալ, օրինապահ, լիիրաւ քաղաքացիներ: Հայերու լիիրաւ քաղաքացիութեան հանգամանքը ընդգծելու համար, յատկապէս վերջին քանի մը տասնամեակներուն «հայկական գաղութ» եզրոյթը փոխարինուած է «Հայերը Սուրիոյ ամբողջական հիւսուածքի մէկ մասնիկն են» արտայայտութեամբ:

2011ին Սուրիան եւ Սուրիոյ հայերը անկիւնադարձային հանգրուան մը թեակոխեցին, երբ Սուրիոյ պատերազմով սկիզբ առաւ անապահովութիւնը ու գաղթի մեծ ալիքը բացասաբար ազդեց համայնքին կենսունակութեան վրայ:

Երկրի բոլոր վայրերը անխտիր թիրախ դարձան հրթիռակոծումներու, պայթումներու, ալան-թալանի, գողութեան, հրկիզման եւն.:

Հայկական շրջաններ, կալուածներ եւ սրբատեղիներ նոյնպէս բռնագրաւուեցան կամ հրթիռակոծումներու թիրախ դարձան, ինչպէս՝ Հալէպ, Ռաքքա, Հոմս, Եագուպիէ, Ղընեմիէ, Թէլ-Ապիատ, Քեսապ, Տէր Զօրի Սրբոց Նահատակաց Եկեղեցի եւ Մեծ Եղեռնի Նահատակաց Յուշահամալիր եւն.:

Այստեղ, ակնարկային ձեւով լուսարձակի տակ կ'առնենք Հալէպի հայերու իրավիճակը՝ պատերազմի հանգրուանին:

Հալէպի հայահոծ կամ հայաբնակ վայրեր եւ այլ շրջաններ թիրախ դարձան ծանր հրթիռարձակումներու, որոնց իբրեւ հետեւանք այլ բնակիչներու կողքին հայերու արհեստանոցներ, գործատեղիներ եւ խանութներ եւս առաջին հերթին կողոպտուեցան, ապա քանդուեցան, հրոյ ճարակ եւ աւերակ դարձան: Հրթիռարձակումներու պատճառով արձանագրուեցան բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ: Այս բոլորին վրայ աւելցաւ հարիւրի մօտ առեւանգեալներու (միայն հալէպահայեր) պարագան: Առեւանգեալներէն շատեր փրկագինով ազատ արձակուեցան, իսկ ուրիշներ տակաւին կը մնան առեւանգուած:

Մարդկային մեծ ողբերգութեան մը ճիրաններուն մէջ նետուած էր ամանդապահ Հալէպը:

Ռմբակոծումներու, հրթիռածզութեան ու կրակոցներու պատճառով տարբեր տարողութեամբ վնասներ կրեցին Հալէպի գրեթէ բոլոր հայապատկան կալուածներն ու սրբատեղիները. այսպէս.-

- Հայ երեք համայնքներու հովանաւորութիւնը վայելող Պոսթան Փաշա գտնուող Հայ Ծերանոցը (Հանգստեան Տուն) սիւներէն զատ ամբողջովին ււերուեցաւ եւ կողոպտուեցաւ:

- Նոր Գիւղի Հայ Կաթողիկէ Ս. Վարդանանց Եկեղեցին եւ դպրեվանք-կղերանոցը հակամարտութիւններու ճակատ դառնալով, նաեւ վանքին տակը պայթեցուած գետնուղիին պատճառով, ամբողջովին փլուզումի ենթարկուեցան:

- Սիւլէյման ալ-Հալապիի Հայ Առաքելական Ս. Գէորգ Եկեղեցին հրոյ ճարակ դարձաւ եւ մասամբ քանդուեցաւ:

- Ճիտէյտիէի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցին՝ հին Հալէպի փողոցներուն մէջ կեդրոնացած աւելի քան կէս-հազարամեակի պատմութիւն ունեցող այս եկեղեցիին մուտքի բաժինը քանդուեցաւ:

- Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին ու կողքի ազգապատկան կառոյցները նուիրեալ հայ տղոց անձնագրոհութեան իբրեւ արդիւնք փրկուեցան ահաբեկչական յարձակումէ, սակայն եկեղեցին միշտ թիրախ մնաց:

- Նոր Գիւղի կեդրոնը գտնուող Հայ Կաթողիկէ Ս. Երրորդութիւն Եկեղեցին, Յուլիս 2016ին ուղղակի թիրախ դարձաւ: Հրթիռակոծումէն շաբաթներ ետք եկեղեցին վերաշինուեցաւ եւ վերականգնեցաւ:

- Հայ Կաթողիկէ համայնքի Տիրամայր Օգնութեան աթոռանիստ Եկեղեցին ծանր վնասներ կրեց: Եկեղեցւոյ յարակից առաջնորդարանը նոյնպէս հրթիռակոծման ենթարկուեցաւ:

- Մունշիէի Հայ Աւետարանական Էմմանուէլ Եկեղեցին քանի մը անգամ հրթիռարձակումներու ենթարկուեցաւ, իսկ Կիրակի օր մը, պաշտամունքէն ետք հրթիռ մը քանդեց եկեղեցւոյ առաստաղը:

- Թելեֆոն Հաուսիի Հայ Աւետ. Բեթէլ Եկեղեցին քանիցս թիրախ դարձաւ հրթիռակոծումներու:

- Էշրեֆիէի Հայ Կաթողիկէ Աւետման Եկեղեցին եւ համալիրը նոյնպէս վնասուեցան:

Հայ երեք յարանուանութիւններու գերեզմանատուներն ալ յաճախակի հրթիռներու թիրախ հանդիսացան:

Ազգային, կրթական-միութենական կառոյցներէն տարբեր տարողութեամբ վնասներ կրած են Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանը, ազգապատկան «Սիս» բնակարանային համալիրը, ՍՕԽաշի ընկերա-բժշկական կեդրոնը, ՀԲԸՄ Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպենկեան Երկրորդական Վրժ.ը, Ազգ. Զաւարեան Վրժ.ը, Ազգ. Հայկազեան Վրժ.ը, Սարգիս Չեմպէրճեան Կրթասիրաց Երկրորդականը, Հայ Աւետարանական Բեթէլ Վրժ.ը, Հայ Կաթողիկէ

«Զուարթնոց» Վրժ.ը, Մխիթարեան Վրժ.ը, Կիլիկեան Վրժ.ի երեք շէնքերը, Հալէպի ՀՄԸՄի եւ ՀԵԸի մարզաւանները:

Ահաւոր պատկեր կը ներկայացնեն յատկապէս Նոր Գիւղի արեւելեան թաղամասերու հայկական բնակարաններն ու գործատեղիները, ինչպէս նաեւ Ճիտէյտիէի բնակարանները:

Հալէպցիք ու հալէպահայութիւնը ամէնածանր դրութեան մէջ գտնուելով, զրկուած էին ամէնէն տարրական ու անհրաժեշտ կարիքներէն. հացի սուր տագնապ, ելեկտրական հոսանքի չգոյութիւն, ջուրի հոսքի դադարում, օդի կազի նուազում, կանաչեղէնի եւ այլ սննդեղէնի չգոյութիւն, սղաճը...՝ միքանին են կենցաղային դժուարութիւններէն: Սուրիական թղթոսկիի արժեզրկումն ալ պատճառ դարձաւ, որ գիները առնուազն քառապատկուին:

Հարիւրաւոր հայ ընտանիքներ բռուն բախումներու շրջաններէն տնագուրկ եղան եւ ապաստան գտնելու համար դիմեցին Հալէպի Շտապ Օգնութեան Գործադիր Մարմնին (ՀՇՕԳՄ):

2012 Յուլիս-Օգոստոսին, Հալէպի ծանր մարտերուն բերումով Բերիոյ Թեմի ազգային իշխանութիւնը որոշեց, Ազիզիէի շրջանի եռայարկ ազգապատկան «Ղազար Պետիկեան» շէնքը առժամաբար դնել ՀՇՕԳՄի տրամադրութեան տակ: ՀՇՕԳՄի անմիջական դասաւորումով, թէժ շրջաններու քանի մը տասնեակ հայ ընտանիքներ, որոնք անօթեան մնացած էին, ապաստանեցան Պետիկեան շէնք, մինչեւ 2016:

Նոր Գիւղ հայահոծ թաղամասը, մեծ մասամբ, կը մնայ անբնակելի շրջան: Այնտեղի հայերը առհասարակ լքած են իրենց տունն ու տեղը ու փոխադրուած ւաւելի ապահով վայրեր՝ քաղաքին մէջ, կամ քաղաքէն դուրս: Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի պողոտային վրայ ո՛չ մէկ խանութ բաց էր, մինչեւ 2016 Դեկտեմբեր:

Նոյնն է պարագան Ճիտէյտիէի շուրջ 60 հայ ընտանիքներուն, որոնք ընդհանրապէս լքած են իրենց տունն ու տեղը ու փոխադրուած ւաւելի ապահով վայրեր:

Ահաւոր ու աննկարագրելի է վիճակը Պոսթան Փաշա եւ Արքուպ թաղամասերուն, որոնք ամիսներ շարունակ ենթակայ մնացին օդային ու ցամաքային գնդակոծութեանց ու հրթիռարձակումներու:

Հալէպէն դուրս գալու ճամփաները փակուեցան: Օրինակ, Քամիշլիի շրջանը երթալ-գալու համար պէտք էր Լաթաքիա երթալ ցամաքի ճամփով, ապա օդանաւով ուղղուիլ հոն:

Հալէպահայութիւնը, այսպէս, քաղաքի դժնդակ պայմաններուն բերմամբ, տարիներ շարունակ ռմբակոծումներուն իբրեւ հետեւանք զոհեր տուաւ, նահատակներու մահը սգաց եւ կենցաղային ու տնտեսական ծանր դժուարութիւններ դիմագրաւեց:

Այսօրուան տուեալներով, Հալէպի հայ համայնքը կորսնցուցած է 2011ի իր թիւին կէսէն աւելին: Հայաթափուած եւ նօսրացած վիճակի մէջ են Հալէպի կարգ մը շրջաններ:

Հալէպի մէջ նահատակուած եւ զոհուած են շուրջ 135 հոգի (ներառեալ Սուրիոյ բանակին մէջ ծառայողներ), թեթեւ եւ ծանր վիրաւորուած են շուրջ 350 հոգի: Աւելի քան 1000 բնակարաններ, որոնց կողքին ազգային կառոյցներ՝ քանդուած են: Աւերուած, կործանած եւ կողոպտուած են հայերու պատկանող աւելի քան 1000 խանութ, գործատեղի եւ գործարան:

Վերջին շրջանին յատկապէս պատերազմին պատճառով հայերու մէջ թափ առնող արտագաղթը՝ անապահով վիճակի կողքին, նաեւ տնտեսական շարժառիթներ ունի: Մեծ է թիւը նաեւ այն երիտասարդներուն, որոնք պայմանագրային զինծառայութենէն եւ կամ բանակի պահեստային զինծառայութենէն կը խուսափին: Առ այդ, հազարաւոր հայեր հեռացան Հալէպէն, ուրիշներ եկան նոր կայք փնտռելու Սուրիոյ ծովափնեայ քաղաքներուն՝ Թարթուսի, Պանիասի, Լաթաքիոյ եւ Քեսապի մէջ: Հալէպցիք հիմնականին մէջ արտագաղթեցին Լիբանան, Հայաստան, ԱՄՆ, Քանադա, Եւրոպա, Աւստրալիա, Ծոցի Երկրներ...:

Հայութեան գաղթը Հալէպէն տեղի ունեցած է տարբեր ժամանակներու, զանազան դրդապատճառներով, Համաշխարհային Բ. Պատերազմէն սկսեալ, պատճառ դառնալով որ հալէպահայ համայնքը ծանրօրէն տուժէ: Հալէպահայ արտագաղթը երբեւէ չէ դադարած:

Արտագաղթի բերմամբ քաղաքէն հեռացան պատասխանատու դիրքի վրայ եղողներ՝ կղերականներ, կուսակցականներ, կրթական մշակներ, միութենականներ, բժիշկներ են.:

Հալէպահայերու վնասը անսահման է. այստեղ չենք նշեր անոնց Քեսապ, Ղընեմիէ, Եագուպիէ եւ այլ շրջաններ գտնուող ամառանոցային կորուստները:

Դժուար է համեմատել կամ բաղդատել հալէպցիներու կրած վնասները Սուրիոյ որեւէ քաղաքի բնակչութեան վնասներուն հետ: Տակաւին չենք խօսիր հոգեկան խանգարումներու ու յառաջացած հիւանդութեանց մասին:

12 Դեկտեմբեր 2016ի գիշերը՝ Սուրիոյ բանակի յառաջախաղաքքէն ետք, հալէպցիները ապրեցան պատմական օր մը եւ ցնծութեամբ տօնեցին մարտիրոսացած քաղաքին ազատագրումը, Հալէպի յաղթանակը: Բայց եւ այնպէս, Հալէպի ժողովուրդը քաջ կը գիտակցի, որ պատերազմը չէ աւարտած եւ իր դիմաց կան շատ դժուարին մարտահրաւերներ, որոնցմէ մէկն է Հալէպի վերականգնումը:

22 Դեկտեմբեր 2016ին, Սուրիոյ բանակին կողմէ պաշտօնապէս յայտարարուեցաւ Հալէպ քաղաքի ազատագրումը: Սուրիոյ կառավարութիւնը հաստատեց Հալէպ քաղաքի վերականգնման աշխատանքներու ծրագիրը: Ծրագիրը կը ներառէ ճանապարհներու բացումը եւ քաղաքի ապահովումը ջուրով եւ ելեկտրականութեամբ: Վեց

ամսուան ընթացքին քաղաքի արեւելեան թաղամասերու մէջ 50 դպրոց վերանորոգելու հրատապ ծրագիրը արդէն կը գործադրուի: Կը նախատեսուի նաեւ երկաթուղիի եւ օդակայանի վերակառուցումը:

Հալէպի վերականգնումի ծիրին մէջ արդէն ՀՇՕԳՄի աշխատանքները՝ Սուրիոյ հայութեան ու մանաւանդ Հալէպի հայութեան համար, ամէնօրեայ տքնաջան ճիգ են, որ գնահատելի երետոյթ է: Մարմինը արդէն վերականգնումի աշխատանքներուն նկատմամբ իր որոշ պատկերացումն ու ծրագիրը ունի:

Հալէպի քաղաքապետարանի ստորաբաժանումները մեծ աշխուժութեամբ կ'աշխատին վերականգնել քաղաքը. հետզհետէ կը կանոնաւորուի երթեւեկութիւնը, կը բացուին տարիներ փակ մնացած ճամփաները: Ելեկտրականութիւնն ու ջուրը վերականգնած են կարգ մը շրջաններ:

Քաղաքի անմիջական բարեկարգումը կ'իրագործուի ըստ կարելոյն կարճ ժամանակի մէջ, սակայն Հալէպի վերականգնումը երկար ժամանակի կը կարօտի, որովհետեւ քաղաքը համարեա՛ւ ւերակ դարձած է:

Մեծ է թիւը անոնց, որոնք կը վերադառնան իրենց բնօրրանը՝ կամաց-կամաց կառուցելու իրենց բնակարաններն ու գործատեղիները:

Վերջապէս, վերջ կը գտնէ այս ւերիչ պատերազմը ու կարելի կ'ըլլայ Սուրիոյ մէջ գործող բոլոր հայկական համայնքներուն ու կեդրոններուն՝ վերակազմաւորուելու, վերականգնելու ու պահելու հայ ներկայութիւնը այս շատ սիրելի ու օրհնուած երկրին մէջ:

Սուրիոյ պատերազմը ճիշտ է, տակաւին իր աւարտին չէ հասած, սակայն Հալէպ, Հոմս, Դընեմիէ, Քեսապ, Տէր Զօր եւ այլ շրջաններ ազատագրուած են: Սուրիոյ հայութիւնը ներկայիս կը բախի բազմաթիւ խնդիրներու, որոնք, փաստօրէն, մէկ կողմէ կապուած են ազգապահպանման, միւս կողմէ՝ տնտեսութեան: Ազգապահպանութեանն ուղղուած ջանքերը տակաւ կը դժուարանան. կը մեծնայ օտար մշակոյթներու ազդեցութիւնը, կան արաբախօս շատ ընտանիքներ, որոնք հայկական շրջանակի մէջ մնալու զգացողութիւնը աստիճանաբար կը կորսնցնեն, որոշակիօրէն կը շատնան նաեւ խառնամուսնութիւնները (հիմնականին մէջ՝ քրիստոնիայ արաբներու հետ):

Եզրակացնելով՝ պէտք է ըսել որ Համայի, Ազէզի, Ճարապլուսի, Թէլ Պրաքի, Արաբ Բունարի եւ ուրիշ շատ մը շրջաններու մէջ հայկական համայնք գոյութիւն ունէր ատենին. այժմ անոնց յիշատակը մնացած է միայն: Իսկ Սուրիոյ պատերազմին պատճառով հայաթափուած կը թուին կարգ մը այլ շրջաններ եւս:

Սուրիահայ ժամանակակից համայնքը եթէ ձեւաւորուած է հիմնականին մէջ 1915-20ին՝ Հայոց Յեղասպանութեան հետեւանքով, ապա ուղիղ 100

տարի ետք Սուրիոյ պատերազմին պատճառով Սուրիոյ ժողովուրդին հետ միասին մեծ հարուած ստացած եւ նօսրացած է:

Սուրիոյ հայութիւնը կը շարունակէ մնալ Միջին Արեւելքի հայահոծ կարեւորագոյն կռուաններէն մէկը, համազգային ծրագիրերու եւ անժամանցելի Դատին վերջնական լուծման համար կարեւոր կեդրոն մը:

Սուրիոյ հայութիւնը, հակառակ իր դէմ ցցուող զանազան մարտահրաւերներուն, պատերազմի մահաշուք եւ դժնդակ պայմաններուն, տակաւին կը փորձէ տոկալ եւ անխախտ պահել իր գոյութիւնը արտաքին աշխարհի մարտահրաւերներուն դիմաց:

A Note on the Losses of the Armenian Community of Aleppo
(Summary)

Avo Katerdjian
avokat1970@hotmail.com

The author briefly reports on the losses the Armenian community of Syria faced during the war years. Against the backdrop of a general overview of the Armenians of Syria, the report highlights specifically the financial, demographic, cultural, business, and educational losses and implications of the war on the Aleppo Armenians, the new demographic map of the Armenians of Syria and their future prospects.